Հաստատում եմ՝

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի

Տնօրեն՝_____ Ի.Վարդանյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋԻ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ

2020-2021 ՈՒՍՏԱՐՎԱ

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Հաշվետվությունը կազմված է Որակի ապահովման պատասխանատուի 2019-2024 թվականների երկարաժամկետ պլանի կարճաժամկետ գործողությունների 2020-2021 ուստարվա ժամանակահատվածի համար:

Զեկույցում ներկայացված է պլանով նախատեսված 7 չափանիշների համար նախատեսված և իրականացված կարճաժամկետ գործողությունները և համապատասխան հիմքերը:

Ներկայացնենք ըստ 7 չափանիշների կատարված աշխատանքները:

1. ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս չափանիշի շրջանակում իրականացվել են հետևյալ բարեփոխումները.

Գործողություն 3. Վերանայել վարչարարության ՈԱ մեխանիզմները՝ ապահովելով ՊԻԳԲ շրջափուլի ամբողջական իրականացումը:

Վերոհիշյալ գործողությունը պլանավորված է 2020-2021 ուստարվա ընթացքում, սակայն աշխատանքները իրականացվել են 2019-2020 ուստարվա ընթացքում: Հաշվետու ժամանակահատվածում Քոլեջի բոլոր ստորաբաժանումների համար նոր ձևաչափով ներկայացված կատարողականների երկու տարվա վերլուծությունների հիման վրա ներկայացվել են համապատասխան բարելավման առաջարկությունն: Կազմակերպվել են սեմինարներ և քննարկումներ ստորաբաժանումների աշխատակիցների համար կատարողականների բարելավման ուղղությամբ: Բոլոր ստորաբաժանումները ժամանակին ներկայացրել են 2020-2021 ուստարվա կատարողականները:

(Հիմք՝ Ստորաբաժանումների կատարողական զեկույցներ)

2. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Այս չափանիշի շրջանակում իրականացվել են հետևյալ բարեփոխումները.

Գործողություն 1. Վերանայել դասավանդման և ուսումնառության ընթացակարգերը:

Տնօրենի հրամանով ձևավորված աշխատանքային խմբի կողմից իրականացվել են համալիր միջոցառումներ, որի արդյունքում վերանայվել և մշակվել են ուսումնական գործընթացի բարելավմանն ուղված ներքին նորմատիվ փաստաթղթեր: Այս գործողությունը նախատեսված էր իրականացնել 2020-2021 ուստարվա ընթացքում, սակայն Քոլեջում իրականացվող բարեփոխումների շրջանակներում ամբողջությամբ վերանայվել և մշակվել են դասավանդմանն ու ուսումնառությանը վերաբերվող ներքին նորմատիվ իրավական փաստաթղթեր:

(Հիմք՝ Նոր փաստաթղթերի ցանկ)

Գործողություն 2. Կազմակերպել վերապատրաստումներ դասախոսական համար:

Հաշվետու ուստարվա ընթացքում Քոլեջի դասախոսական կազմը ընդհանուր մասնակցել ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից կազմակերպված 2 մասնագիտական վերապատրաստումների, որին մասնակցել են Քոլեջի 10 դասախոս:

Նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել 2021-2022 ուստարվա համար ևս կազմակերպել վերապատրաստումներ:

Գործողություն 3. Բարելավել դասալսումների և դրանց քննարկումների մեխանիզմները:

Հաշվետու ժամանակահատվածում ներդրված նոր «Դասալսումների կազմակերպման, անցկացման և գնահատման» կանոնակարգի համապատասխան կազմակերպվել է ընդհանուր 14 դասալսումներ:

(Հիմք՝ դասալսումների արձանագրություններ)

Գործողություն 4. Մշակել բենչմարքինգի իրականացման ընդհանուր մեթոդա-բանություն և արդյունքների կիրառման մեխանիզմներ:

Բենչմարքինգի իրականացման քաղաքականություն և ընթացակարգի համապատասխան աշխատանքները պլանավորվում է իրականացնել 2022-2023 ուստարվա ընթացքում:

Քոլեջի ղեկավարության կողմից քայլեր են ձեռնարկվել և ձեռնարկվում ընդլայնելու համագործակցության շրջանակը, հատկապես միջազգային ուսումնական հաստատությունների հետ: Բանակցությունների արդյունքում Բելառուսի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության նմանատիպ ուսումնական հաստատությունների հետ պյմանավորվածություն է ձեռքբերվել 2021-2022 ուստարվա սկզբին կնքել համագործակցության պայմանագրեր:

4. ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս չափանիշի շրջանակում իրականացվել են հետևյալ բարեփոխումները.

Գործողություն 2. Ապահովել ուսանողների մասնակցությունը ուսումնական ծրագրերի մշտադիտարկման գործընթացում:

Հաշվետու ուստարվա ընթացքում տնօրենի 15.02.2021թ. №Ա ԿԳ-03 հրամանով ձևավորված աշխատանքային խմբերում ընդգրկված են եղել նաև ուսանողական խորհրդի ներկայացուցիչները: Ուսանողները անմիջական մասնակցություն են ունեցել Քոլեջում գործող 4 ՄԿԾ-ի մշտադիտարկման և վերանայման աշխատանքներում:

(Հիմքեր՝ Տնօրենի հրաման, աշխատանքային խմբի ղեկավարի զեկուցագիրը:)

Գործողություն 3. Իրականացնել միջոցառումներ ուսանողների գեղագիտական դաստիարակությունը զարգացնելու նպատակով:

Հաշվետու տարում նախատեսված միջոցառումներ չեն կազմակերպվել:

Գործողություն 4. Ապահովել ուսանողների իրազեկվածության աստիճանն իրենց իրավունքների և պարտականությունների իմացության ոլորտում:

Քոլեջում ուսանողների իրազեկվածության տրամադրումը իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կրում են պարտադիր և պարբերական բնույթ: Հաշվետու ուստարվա ընթացքում ՈԱ պատասխանատուի կողմից կազմակերպվել է 3 հանդիպում-քննարկումներ ուսանողական խորհրդի ներկայացուցիչների հետ:

Ամբիոնների կողմից ևս այս գործողությունը իրականացվել է ամբողջ ուսումնական տարվա ընթացքում:

6. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Այս չափանիշի շրջանակում իրականացվել են հետևյալ բարեփոխումները.

Գործողություն 1. Մշակել հետազոտական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ մեխանիզմներ:

2020-2021 ուստարվա ընթացքում ՈԱ պատասխանատուի կողմից կազմակերպվել է 2 հանդիպում-քննարկում Քոլեջում ուսանողների կողմից հետազոտական աշխատանքների ակտիվացման և բարելավման նպատակով: Քննարկումների արդյունքում վերջնական տեսքի է բերվել «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Միջին մասնագիտական կրթական ծրագրի դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման կարգի և «Գրիգորիս» բժշկա - հումանիտար քոլեջի ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու քաղաքականության նախագծերը: Ներկայացված փաստաթղթերը նախատեսվում է շրջանառության մեջ դնել 2021-2022 ուստարվանից:

Համաձայն նոր փաստաթղթերի 2021-2022 ուստարվանից մասնագիտական ամբիոններում նախատեսվում է իրականացնել անհրաժեշտ աշխատանքները, աստիճանաբար ավելի շատ քանակով ուսանողների ներգրավմամբ:

7. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Այս չափանիշի շրջանակում իրականացվել են հետևյալ բարեփոխումները.

Գործողություն 6. Ընդլայնել ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը ՈԱ գործընթացներում:

Այս գործողությունը ամբողջությամբ ավարտված է: Քոլեջում գործող բոլոր կառավարման և խորհրդակցական մարմիններում ներառված են ներքին և արտաքին շահակիցներ:

Որակի ապահովման պատասխանատու _____ Լ.Հարությունյան

30.11.2021թ.